Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 315 առ Պատ· ազգայինս Եկատերինոդար քաղաքի, որով գովէ զնոսա սակս նուիրաբերութեան 520 րուբլեաց յօգուտ սովելոց Տաճկահայաստանի: Մարտի 10:

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 455 առ կոյս Հռիփսիմէ Թայիրեան, որով յօժարութեամբ սրտի տայ Նմա իրաւունս ժողովել առ բարեպաշտ Տիկնայս և ընդունել զկամաւոր նուէրս ի պայծառութիւն գերահռչակ վանիցն Սրբոց Յակոբեանց որ յԵրուսաղէմ 16 Նոյեմ· 1863 ամի:

## ՔԱՂՈՒԱԾՔ Ս· ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ*·

17· Յունուարի· Սինոդն Ս· Էջմիածնի լսեց Նորին Վեհափառութեան ս· կոնդակն ի 11 յունուարի թ· 18, որով Նորին Օծութիւնն հրամայեց արձակել Վանական կառավարութեան նախկին անդամոց, որոնց պաշտօնավարութեան ժամանակը լրացած էր, և նոցա տեղը կարգել ի պաշտօն նախագահի Գեր· Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանին և անդամներ բարեշնորհ Անտօն վ· Վարդագարեանին, արժ· Թադէոս աբեղայ Առիւծեանին և շնորհ· Յուսիկ սարկ· Զօհրապեանին: Ըստ որում Խոր Վիրապի վանահայր կարգել բար· Հմայեակ վ· Տէր-Սարգսեանին, կարմիր վանքը—բար· Վահրամ վ· Սկունուն:

Ս· Սինոդը կարգադրեց Նորին Վեհափառութեան հրամանի իրագործումը:

—

24 յունուարի· Սինոդն Ս· Էջմիածնի ըստ յայտարարութեան կոնսիստ· Հայոց Երևանի ի 4 Սեպտ· 1893· թ· 1273, որով խնդրում է վաւերական համարել Առաջաձորցի Սուար Յարութիւնեանի պսակը խնամութեան հինգերորդ աստիճանի մէջ, հրամայեց վաւերական ճանաչել ըստ բարձր բարեհաճութեան Նորին Վեհափառութեան:

—

26 յունուարի 1894: Սինոդն Ս· Էջմիածնի հիմնուելով Ղարաբաղի կոնսիստորիայի ի 22 Դեկտ· անցեալ ամի թ· 2633 միջնորդութեան վրայ, հրամայեց թոյլ տալ երեցփոխանին ս· Աստուածածին աւագ եկեղեցու՝ ծախսել եկեղեցական դրամից 600 ռ· զիկառք պատրաստելու համար:

—

Սինոդն Ս· Էջմիածնի ըստ յայտարարութեան կոնսիստորիային Բեսարաբիոյ ի 7 Դեկտեմբերի 1893 ամի թ· 2518, թոյլատրեց նորան՝ համաձայն խնդրանաց մեծ· տիտուլիարնիյ սովետնիկ Սերովբէի Գ· Մխաերեանց Սիմֆերոպոլցու՝ ընդունել յիշեալ բարերարի նուիրած երկու տունն՝ արժողութեամբ 5500 ռ· ի սեփականութիւն ս· Աստուածածին եկեղեցու Սիմֆերոպոլ քաղաքի:

—

16 փետրուարի· Սինոդն Ս· Էջմիածնի ըստ յայտարարութեան կոնսիստ· Հայոց Տփխիսի ի 19 յունիսի 1891 ամի թ· 2170 Խաչատուր Ա· Վարդանեանց՝ Մշուշ գաւառի Շենատ գիւղացու կրկնամուսնութեան համար, որով վերջինս փոխել է իւր անունն ի Խաչատուր Յուսիկեան Տէր Գալստեանց, պսակուել է 1877 թուին Հաւլարարցի Համբարձում Ալլավերդեանի Հռիփսիմէ անուն 15 տարեկան դստեր հետ և 1888 թուին թողելով իւր ամուսնուն հեռացել է իւր հայրենիքն և վերստին պսակուել համագիւղացի օր· Պապէ Յակոբեանի հետ իբրև ամուրի ոմն, որի հետ ապրում է և այժմ գրեթէ խելագարութեան վիճակում, ինչպէս վկայում է Տարօնի առաջնորդը 7 Մայիսի 1891 ամի թուով 451·— հրամայեց գրել Ամենապատիւ Պատրիարքին Կ· Պոլսոյ և անվաւեր հրատարակել յիշեալ անձի ապօրինի պսակն և ձգել նորան օրի-

* Բոլորովին մասնաւոր հանգամանքներ մինչև այժմ խանգարեցին պաշտօնականների հրատարակութիւնը·

նական պատժի տակ։ Իսկ խելագարութեան համար ուղարկել բժշկի վկայական, որպէս զի նորա օրինաւոր կնոջ Հախիխեանի խնդիրը տնօրինուի։

—

16 փետրուարի. Սինոդն Ս. Էջմիածնի հիմնուելով Տփխիսի Հայոց Կոնսիստ. յայտարարութեան վրայ ի 29 Ապր. 1892 ամի Թ. 1379 Աշաշուրցի Գէորգ Տէր Սարգսեանի ամուսնական խնդրի վերաբերմամբ, որով վերջինս պատճառելով իւր այրական անկարողութիւնն, խնդրում է, ազատ կացնել զինքն ամուսնական կապից. սակայն ի նկատի առնելով բժշկական վկայականն, ըստ որում ի կայքս տկար այդ ամուսինը կարող է օրինաւոր կենցաղավարութեամբ և բժշկական օգնութեամբ վերականգնել իւր այրութիւնն, որի խանգարման պատճառն է եղել ինքն, — հրամայեց մերժել այդ խնդիրը, յայտնելով նորան այդ վճիռը Կոնսիստորիայի միջոցով։

—

16 փետրուարի. Ըստ ս. Կոնդակի Նորին Վեհափառութեան տուեալ 3 փետրուարի Թ. 102, Սինոդն Ս. Էջմիածնի իւր օրագրութեամբ կարգադրեց նշանակել նախանդամ Կոնսիստորիային Հայոց Շամախու և վանահայր Սաղեանի վանքի բարեշնորհ Մակար Ծ. վ. Բարխուդարեանին, իսկ նոյն վանքի վանահայր Ստեփ. վ. Տէր Գրիգորեանին միաբան Երնջակի վանքի, Արսէն վ. Պլուչեանին նոյն վանքի միաբան և ըստ հրամանին Նորին Օծութեան բացուելի վանական դպրոցում՝ ուսուցիչ, այլ և յանձնել վանահօրը վերջնոյս աջակցութեամբ կարգաւորելու յիշեալ վանքի տնտեսական հարուստ եկամուտի գործերն և հոգալ դպրոցի բոլոր պիտոյքները։ Իսկ Նուխուոյ փոխանորդ բարեշնորհ Յովսէփ վ. Խաչատրեանին տեղափոխել ի Թելեթ վանահայրական պաշտօնով։ Եւ որովհետև նորա տեղը նշանակուած արժ. Պետրոս վ. Յովակիմեանը Թախանձագին խոստովանելով իւր անկարութիւնը՝ զթութիւն գտաւ Նորին Վեհափառութեան խնամածութիւնից, ուստի փոխանորդ ուղարկուեց Նուխի բարեշնորհ Սահակ վ. Բաղդասարեանը Ս. Սինոդի առանձին օրագրութեամբ ըստ բարեհաճ կամաց Նորին Սրբութեան։

—

17 փետրուարի. Սինոդն Ս. Էջմիածնի ըստ յայտարարութեան գործակալին Նոր-Բայազիտի 31 Հոկտ. 1893 ամի, Թ. 499, կարգադրեց խնդրել Երևանի նահանգապետից արգելել Մաղրայ, Ջոթ, Տաշկենդ և այլ գիւղերի պարսիկ բնակիչներին, որ ձեռնամուխ չլինին Հայոց վանքերի, եկեղեցիների, գերեզմանատըների և եկեղեցական աւերակների հնութեանց։

—

18 փետրուարի. Սինոդն Ս. Էջմիածնի ի նկատի առնելով Ներքին Գործոց Նախարարի յառաջադրութիւնն ի 21 յունուարի Թ. 22, հրամայեց Կոնսիստորիային Հաշտարխանի՝ առնել իւր տեսչութեան տակ Անդրկասպեան երկրի եկեղեցական վիճակի գործերն, և Շամախու Առաջնորդին և Կոնսիստորիային, որոց տեսչութեան տակ էր այդ վիճակը, ծանուցանել այդ կարգադրութիւնը։

—

26 Մարտի 1894. Սինոդն Ս. Էջմիածնի ի նկատի առնելով Տփխիսի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնն, 31 յունուարի Թ. 376, որով խնդրում է, յարգել Օքրոպակերտ գիւղի ծխական դպրոցի հոգաբարձութեան խնդիրն և թոյլատրել հաւաքել կիւրակէ օրերը նոյն տեղի եկեղեցում գանձանակ յօգուտ դպրոցի։ Ս. Սինոդը տեսնելով որ արդէն եկեղեցու գլամագլխի տոկոսիքը տրուում է դըպրոցին, նոյն Կոնսիստորիայի միջոցով հրամայեց մերժել նորա պահանջները։

—

26 Մարտի. Սինոդն Ս. Էջմիածնի ի նկատի ունենալով Երևանի Բարեգործ. ընկերութեան տեղական ճիւղի գրութիւնն յանուն Նորին Վեհափառութեան ի 18 փետր. Թ. 27, ըստ բարեհաճ հրամանին Նորին Օծութեան հրամայեց Մայր Աթոռոյս գան-

ձապահին ուղարկել առ նոյն ընկերութեան վարչութիւնն 339 ռուբլի գումարին, որ ժողովուած էր յօգուտ սովելոց Երեւանայ նահանգի։ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց և իւր կողմից նուիրել նոյն նպատակով 200 ռուբլի, որով կը լինի ամբողջ գումարը 539 ռուբլի։

—

26 Մարտի. Սինոդը Ս. Էջմիածնի ի նկատի առաւ Երեւանի կոնսիստորիայի յայտարարութիւնը Մարտի 9-ից 440 թւոյ, որով խնդրում է խզել կարապետ Մելիք Էյնաթեանի և Շուշանիկ Տէր Պետրոսեանցի ամուսնութեան կապը, պատճառելով թէ ահա 4 տարի է որ դոքա անջատուած են իրարից, բաց որում և յառաջ բերում է մանրամասն նկարագրութիւն հանգամանաց։

Ս. Սինոդը քննելով բոլոր տեղեկութիւնք և չգտնելով ոչ մի օրինական պատճառ խզման, առաջարկեց մերժել։

Նորին Վեհափառութիւնը հաստատեց Ս. Սինոդի այս սահմանածը։

—

28 Յունուարի. Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց ուղարկել Ս. Սինոդին հետեւեալ ս. կոնդակը.

« Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի . . . .

Զկնի յաջողութեամբ Ամենակարողին Աստուծոյ ամբառնալոյ մեր ի Գահ Հայրապետական՝ անհրաժեշտ համարեցաք հասու լինել նաև վիճակի տնտեսութեան Մայր Աթոռոյս և հոգալ վասն կարեւորացն։ Ըստ այսմ և առեալ ի նկատ զտեղեկագիրս ելեմտից Մեծի Տանս և տեսեալ զեղանակ ստուգութեան գումարաց գանձարանի և զկարգ գործադրութեան այնոցիկ՝ Տնտեսութիւնն երեւեցաւ Մեզ կարօտ որոշ իմն հրահանգի և բարեփոխութեան։ Զընդհանուր հրահանգն վասն տնտեսութեան թողլով տալ յապագային՝ առայժմ բարւոք վարկաք տալ կազմել միայն զնախահաշիւ ելեմտից Աթոռոյս վասն այսր 1894 ամի համեմատութեամբ ելեմտից անցեալ 1890—1891, 1892 և 1893 ամաց, զոր և հաստատեալ առաքեմք ի Սինոդդ և պատուիրեմք. նախ՝ անյապաղ տալ Վանական կառավարութեան, Վարչութեան Ճեմարանի, Տպարանական ժողովոյ և Տնտեսի Վեհարանի, յոր պաշտօն առժամանակ կարգեմք զՍահակ ծ. վ. Այվազեան, զառանձին առանձին տումարս՝ վասն գրելոյ յայնոսիկ զմուտս և զծախս ըստ իւրաքանչիւր տեսչութեան, համեմատ նախահաշուոյն։ Երկրորդ՝ զօրինակ այնր նախահաշուոյ յղել առ գանձապահն Սինոդի, զի ունիցի ի նկատի և ըստ այնմ յամսոյ ամիս տացէ զդրամս այնոցիկ Վարչութեանց՝ համաձայն գրաւոր պահանջմանց նոցա։ Երրորդ՝ տալով Վարչութեանցն զպատշաճաւոր քաղուածս ի նախահաշուոյն վերաբերեալս իւրաքանչիւր ումեք ի նոցանէ, պատուիրել զի զհարկաւորեալ դրամն յետ ընդունելոյ ի գանձարանէ գործադրեսցին կարի խնայողութեամբ, արձանագրելով ի տումարսն և փաստացուցանել տալով զյօդուածս ծախուց, որոց արժան իցէ, զգուշանալով՝ զի յաւելուածք ի ծախուց որոշելոց ուրոյն ուրոյն յօդուածովք նախահաշուոյն մի՛ գործադրեսցին յայլ պէտս և կամ ի լցուցանել զպակասորդս ծախուց այլոց յօդուածոց առանց գրաւոր թոյլտուութեան Ս. Սինոդի։ Չորրորդ՝ հանել հրաման Վանական կառավարութեան, զի տացէ միւսոց պաշտօնէից Տնտեսութեան, այն է՝ Մառանապանի, Շտեմարանապետի, Շորապանի, Տնտեսի, Հիւրընկալի և վերակացուի ագարակի զնոյնպիսի ժապաւինեալ տումարս, հսկելով գործոց նոցա և ճշգիւ կիրառութեան դրամոց և այլ ամենայն իրաց, և յամսոյ ամիս յետ ստուգելոյ զտումարս նոցա՝ զերեւելոյն արձանագրեսցէ յայնս, և ի վախճան տարւոյն զընդհանուր համառօտ տեղեկագիրն մատուսցէ Մեզ և Սինոդիդ։ Հինգերորդ՝ յայսմհետէ յընդունել Սինոդիդ զդրամս՝ նոյն ժամայն գրել ի մուտս տումարաց Ատենիդ և Գանձարանին և տալ որոց անկ է՝ զտպեալ ընկալագիրս, և ի սկզբան իւրաքանչիւր ամսոյ ստուգել զգումարս մնից ոչ միայն համեմա-

ութեամբ այնոցիկ ուսմանց, այլ և արժանաւոր ընկալագրոյն և որ առաւել կարևորն է՝ խակական թղթոց, որովք առաքեալ են զգամք, և զայնս կորզաւ գաւառօրեալ ի մի անել ի պատրաստի. իսկ զյօդուածս ծախուց ստուգել գրութեամբք, որովք ըստ նախահաշուոյն պահանջեալ են ի Գանձարանէ զգամք, և ստորագրութեամբք ընդունողաց այնոցիկ: Վեցերորդ՝ հարկ ի վերայ կայ Սինոդիդ նախահոգ լինել, զի բաց ի սովորական ստուգութենէ Գանձարանի, այլ և ի ձեռն երկուց կամ երից անդամոց Դորին յամեայ ամիս անխափան զննեսցին տումարք ծախուց Վանական Կառավարութեան, Ճեմարանի և Տպարանի, պահանջելով միշտ զգրաւոր ապացոյցս ծախուց և զկնդրութիւնս իւրեանց գրելով ի նոյն իսկ տումարս՝ զարդեանցն յայտնել Սեղ. իսկ զծախս Վեհարանի Տնտեան նորին անկեալ է ըստ Սերոյ յանձնարարութեան և զխրութեան: Եօթներորդ՝ զննիչք տումարաց ունելով առաջի աչաց զօգուած Մայր Աթոռոյ՝ խորհեսցին ընդ տնտեսական վարչութիւնս առ ի դարձնել զհնարս հետզհետէ յաւելլոյ զաւերորդս ծախուց որոշելոց ի նախահաշուի, իսկ Սինոդդ պահանջելով ի ժամանակին զհաշուեթս զիւղօրէից և կալուածոց, զապառնիս զնոց վաճառելի գրոց, «Արարատ» ամսագրոյ և զայլս ամենայն՝ փոյթ կայցէ արդիւնաւորել զեկամուտս առհասարակ և զծախսն առնել զէթ ըստ նախահաշուոյն և ոչ բնաւ աւելի: Իսկ յորժամ անակնկալ ինչ դէպք ստիպեսցեն առնել զծախս արտաքոյ սահմանեալ նախահաշուոյն, յայնժամ Իւրաքանչիւր Տեսչութիւն պարտի դիմել առ Սեղ և խնդրել զանօրէնութիւն: Եւ ութերորդ՝ Սինոդդ այժմէն իսկ հարկ ի վերայ դիցէ վերոյիշեալ տնտեսական վարչութեանց, զի յայսմհետէ ուշ դիցեն ի վերջին ամիս իւրաքանչիւր ամի զգուշաւոր նախահոգութեամբ և ճշդութեամբ կազմել զնախահաշիւ մտից և ելից իւրեանց հանդերձ մանրամասն ցուցակաւ և մատուսցեն Սեղ վասն կազմելոյ միաբան խորհրդովք նոցին զընդհանուր նախահաշիւ և ապայ յետ հաստատութեան Սերոյ, ի գործադրութիւն ի ձեռն Սինոդիդ: Եւ քանզի առ չնեբելոյ այլ և այլ հանգամանաց և սղութեան ժամանակի՝ կազմութիւն նախահաշուոյս թերևս չիցէ զերծ ի թերութեանց, սակայն սիրեմք յուսալ, զի յայսմհետէ փորձն օրինաւորական ուսուսցէ Սեղ լնուլ զթերին յապագային:

Յամի Փրկչին 1894՝
28 յունուարի և ըստ
Տումարի ՌՅԽԳ.

Արարատեան Մայր
Աթոռ, ի Ս Էջմիածին
ի Վաղարշապատ

Թ. 111.

Իսկականի վրայ
ստորագրած է՝

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց:

Ս. Սինոդն ի 4 Փետրուարի և ի 4 Մարտի կազմած օրագրութեամբք որոշեց կատարել Նորին Օծութեան ս. Կոնդակն ըստ ամենայնի:

## ԻՄԱՍՏԱԼԻՑ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ.

— Ձայները չպէտք է համրուին, այլ կըշռուին:

— Ազատութեան ոգին, օրէնքները սիրելն է:

— Շահասիրութիւնը ամէն լեզուն ալ կը խօսէ և ամէն դերն ալ կը խաղայ. մինչև իսկ անշահասիրութեան լեզուն ու դերն:

— Յիմարը կը պաշտպանէ մոլորութիւն մը՝ մէկ այնպիսի մարդու յանդուգն անձնապաստանութիւնով, որը որ երբէք չխաբուիր. իսկ իմաստունը ընդհակառակն կը հաստատէ ճըշմարտութիւն մը, մէկ այնպիսի մարդու զգուշութիւնով, որը որ կրնայ սխալուիլ:

— Թանկագին է մեզ բարեկամը, սակայն թշնամին էլ մեզ կօգնէ. բարեկամը ցոյց կուտայ մեզ թէ՝ ի՞նչ կրնամք ընել. իսկ թշնամին կը սորվեցնէ մեզ թէ՝ ի՞նչ պէտք է ընեմք: